

Նարեկ Գալստյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ

Եվրոպական միության ինստիտուցիոնալ-գործառնության զարգացումը

Եվրոպական ինտեգրման զարգացման հանգուցային նշանակություն ունեցող խնդիրներից մեկը մշտապես կապված է եղել պետությունների ինքնիշխանության ազգային սահմանափակության հետ: Վերակառուցվող Եվրոպայում ձևավորվել էր քարենպաստ հասարակական-քաղաքական մթնոլորտ ազգային-պետական կազմավորման ու գործունեության այդ թերությունները հաղթահարել և հնարավոր հակամարտություններից ու պատերազմներից խուսափելու համար: Բնական է՝ դա հնարավոր է իրականացնել միայն պետությունների համագործակցության խորացման և ազգային վարչատարածքային կառավարման համակարգից եվրոպական դաշնության համակարգին աստիճանաբար անցում կատարելու միջոցով:

Եվրոպայի հասարակական-քաղաքական շրջանակներում այդ անհրաժեշտության գիտակցման հիմքով առաջ քաշվեցին եվրոպական պետությունների միասնության գաղափարները: Հենց սկզբից ի հայտ եկան այդպիսի միասնության երկու տարբեր մոտեցումներ՝ ազգային-պետական և վերազգային-եվրոպական: Առաջինի վառ օրինակ հանդիսացավ Եվրոպայի Խորհուրդ ստեղծելու վերաբերյալ 1945թ. Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլի հանրահայտ ելույթը: ԵԽ կանոնադրությունն իրենից ներկայացնում էր զանազան մոտեցումների յուրօրինակ համադրում՝ ազգային խորհրդարանների կողմից ներկայացվող պատվիրակներից կազմված Ասամբլեա՝ առանց օրենսդրական լիազորությունների, ֆեդերալիզմին առավել հարող Նախարարների կոմիտե, որի անդամներն, այնուամենայնիվ, պատասխանատու էին ազգային խորհրդարանների առջև¹:

Եվրոպայի վերազգային ինտեգրման մոտեցում որդեգրել էր ֆրանսիական պետական գործիչ Ժ. Մոնեն՝ զարգացնելով Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռ. Շումանի առաջ քաշած գաղափարները: Մոնեն կարծում էր, որ ապագայում ազգային պետությունը շրջանակների մեջ պահել և, միաժամանակ, եվրոպական մշակութային արժեքները պահպանել հնարավոր կլինի՝ կառուցելով հուսալի, աստիճանակարգված վերազգային կառույց:

¹ St' u Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, в двух книгах, М., 2000, Часть II, стр. 292

Այդ գաղափարների մարմնավորում հանդիսացավ Աժխի և պողպատի եվրոպական համայնքի (ԱՊԵՀ) հիմնադրման մասին պայմանագրի կնքումը 1951թ. Փարիզում Ֆրանսիայի, Արևմտյան Գերմանիայի, Բենիլուքսի երկրների և Իտալիայի միջև, որի համաձայն, այդ կառույցին տրվում էր ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ: Պայմանագրում ամրագրված էր, որ կառավարչական հարցերի լուծման համար պետք է կազմավորվի բարդ քաղաքական համակարգ, որը բաղկացած կլինի մի քանի ինտեգրացիոն ինստիտուտներից՝ Բարձրագույն ղեկավար մարմնից, Ընդհանուր ասամբլեայից, Նախարարների հատուկ խորհրդից (Խորհուրդը) և Գատարանից: Այս համակարգում կենտրոնական դեր պետք է խաղար Բարձրագույն ղեկավար մարմինը, որին պայմանագիրն օժտում էր ոչ երկիմաստ վերազգային բնույթով: Նրա 9 անդամները նշանակվում էին անդամ-պետությունների կառավարությունների կողմից՝ մասնագիտական հատկանիշների հիման վրա և պետք է լիովին անկախ լինեին իրենց կառավարություններից: Իր առջև դրված խնդիրները լուծելու համար այդ մարմինը լիազորված էր ընդունել

- որոշումներ, որոնք պարտադիր էին իրենց բոլոր մասերով,
- հանձնարարականներ, որոնք պարտադիր էին հետապնդվող նպատակներին վերաբերող մասերով,
- եզրակացություններ, որոնք չունեին պարտադիր բնույթ:

Որպեսզի լայն իրավասություններ ունեցող այդ մարմինն անկախ լինի ազգային կառավարություններից իր վարչարարական ու վարչական գործունեության ֆինանսավորման հարցում, նրա համար առանձնացվում էր սեփական եկամուտներից գոյացող բյուջե¹:

Ասամբլեայի անդամները պատվիրակված էին ազգային խորհրդարանների կողմից: Այդ մարմինն օժտված էր ձայների 2/3-ի մեծամասնությամբ Բարձրագույն մարմինը ցրելու իրավունքով:

Խորհուրդը կոչված էր համաձայնեցնելու Բարձրագույն մարմնի և ազգային պետությունների գործողությունները: Նրա լիազորությունները խիստ սահմանափակ էին. Խորհուրդը կարող էր միայն խնդրել Բարձրագույն մարմնին քննարկել առաջարկություններն ու միջոցառումները, որոնք նա համարում էր համապատասխան ընդհանուր նպատակներին և անհրաժեշտ դրանց իրագործման համար²: Այստեղից արդեն պարզ է դառնում, որ ԱՊԵՀ-ում իշխանության հավասարակշռությունն ակնհայտորեն թեքված էր վերազգային Բարձրագույն մարմնի կողմը:

¹ Տե՛ս Европейский Союз на пороге XXI века, под. ред. Ю. А. Борко и О. В. Буториной, М., 2001, стр. 243

² Տե՛ս Шемятенков В. Г., Европейская интеграция. Учебное пособие. – М.: Междунар. отношения, 2003, стр. 30-31

Ինտեգրման վերազգային սկզբունքը պետք է տարածվեր նաև միջպետական հարաբերությունների մյուս, նախևառաջ՝ քաղաքական ու ռազմա-քաղաքական ոլորտների վրա: Սակայն հենց առաջին իսկ փորձը դատապարտված էր անհաջողության¹: Դրանից հետո եվրոպական ինտեգրմանը բնորոշ դարձան աստիճանականությունը և տնտեսական ինտեգրման առաջնայնությունը:

1957թ. Հռոմեական պայմանագրերի հիման վրա ձևավորվեցին նաև Եվրոպական տնտեսական համայնքը (ԵՏՀ) և Միջուկային էներգիայի եվրոպական գործակալությունը (Եվրատոմ): Չևավորվեց 4 մասերից կազմված կառուցվածք՝ Նախարարների խորհուրդը, Հանձնաժողովը, Խորհրդարանը և Դատարանը: 7 անդամներից կազմված Դատարանը կոչված էր ապահովելու ԵՏՀ օրենքների պահպանումն ու մեկնաբանությունները: Միապալատ խորհրդարանն ամենից առաջ բանավեճի մարմին էր: Այն կարող էր մերժել, բայց ոչ ճշգրտել ԵՏՀ բյուջեն և պաշտոնանկ անել Հանձնաժողովն ամբողջությամբ, բայց ոչ մասնակի: Խորհրդարանը սահմանափակ մասնակցություն ուներ օրենսդրական գործունեությանը և չէր վերահսկում Նախարարների խորհրդի գործունեությունը: Հանձնաժողովի անդամները, որոնք նշանակվում էին անդամ-պետությունների կողմից, զբաղված էին բացառապես ԵՏՀ գործերով: Իսկ ահա միջկառավարական բնույթ ունեցող Խորհուրդն Ընկերության բարձրագույն ղեկավար մարմինն էր: ԵՏՀ խորհուրդը գերակա էր Հանձնաժողովի նկատմամբ ավելին, քան ԱՊԵՀ խորհուրդը Բարձրագույն մարմնի նկատմամբ: ԵՏՀ զարգացմանը վերաբերող ամենանշանակալի քննարկումներն անց էին կացվում և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունվում էին Նախարարների խորհրդում, որտեղ կենտրոնական խնդիրը վերաբերում էր ոչ թե ԵՏՀ գլխավոր մարմինների միջև իշխանության բաշխման, այլ հենց Խորհրդում լիազորությունների իրականացման շուրջ, այսինքն՝ ինչպիսի հարցեր կարող են որոշվել մեծամասնությամբ, ինչպիսիք՝ միաձայն²:

1965թ. ԵՏՀ շրջանակներում թե՛ պայքար սկսվեց նրա ղեկավար մարմինների գործառնությունների հարցի շուրջ: Ֆեդերալիզմի կողմնակիցները գտնում էին, որ անհրաժեշտ է ուժեղացնել ԵՏՀ ինստիտուտների վերազգային լիազորություններն ու որոշումների ընդունման գործընթացում հրաժարվել կոնսենսուսից՝ հօգուտ ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունման սկզբունքի: Այդկերպ, նրանք փորձում էին հիմք դնել նաև Եվրոպայի քաղաքական ինտեգրմանը: Դրան կտրականապես դեմ էր Ֆրանսիան: Անդամ-պետությունների միջև տարաձայնությունները հարթելու նպատակով 1966թ.

¹ Փորձելով շարունակել ԱՊԵՀ հաջողված փորձը ռազմա-քաղաքական բնագավառում՝ Ֆրանսիայի կառավարությունը հանդես եկավ Եվրոպական պաշտպանական ընկերության ստեղծման առաջարկությամբ, որի նպատակն էր Գերմանիայի անխուսափելի վերագինումն իրականացնել «Եվրոպական բանակի» առավել նեղ շրջանակներում: Այն պետք է նաև ուղիղ ճանապարհ բանար դեպի արևմտյան Եվրոպայի քաղաքական միավորում ու ինտեգրման գործընթացի ավարտ: Բայց հենց ֆրանսիական խորհրդարանն էլ 1954թ. չվավերացրեց պայմանագիրը և նախաձեռնությունը տապալվեց:

² Տե՛ս II. Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Часть II, стр. 298-299

Լուրսենբուրգում հրավիրվեց ԵՏՀ Խորհրդի արտահերթ նիստ, որտեղ ընդունվեց բանաձև Խորհրդի և Հանձնաժողովի միջև հարաբերությունների՝ ձայների մեծամասնության հիման վրա որոշում ընդունելու սկզբունքի կիրառման մասին: Ֆրանսիայի պնդմամբ որոշվեց, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի պահանջել որոշումների միաձայն ընդունման սկզբունքի կիրառում, եթե քննարկվող հարցը վերաբերում է նրա կենսական շահերին («լուրսենբուրգյան փոխզիջում»)¹: Այդ որոշման մեջ իր արտահայտությունն ստացավ եվրոպական ինտեգրման գոլիստական հայեցակարգը՝ «Հայրենիքների Եվրոպան»:

Եվրոպական ինտեգրման զարգացման հաջորդ կարևորագույն քայլը հանդիսացավ այսպես կոչված «միաձուլման պայմանագրի» կնքումը 1960-ական թթ. երկրորդ կեսին: Մինչ այդ համայնքներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեցող առանձին խորհուրդների ու հանձնաժողովների համար ձևավորվեցին Եվրոպական համայնքի (ԵՀ) միասնական Խորհուրդն ու Հանձնաժողովը: Սկզբունքային նշանակություն ունեցավ նաև ինտեգրման կարիքների համար անդամ-պետությունների ֆինանսական ներդրումների համակարգը ԵՀ սեփական միջոցների համակարգով փոխարինելը:

Պայմանագրով Համայնքի կառուցվածքում տեղի ունեցան նաև մի շարք այլ ինստիտուցիոնալ-գործառնության փոփոխություններ: Խորհրդարանի ընդհանուր թվաքանակն ավելացվեց, պետություններն այստեղ ներկայացված էին ըստ բնակչության թվի: Փոփոխվեց նաև Հանձնաժողովի ու Խորհրդի միջև լիազորությունների հավասարակշռությունը. Խորհուրդը դարձավ գլխավոր «օրենսդիր» մարմինը ԵՏՀ շրջանակներում, իսկ Հանձնաժողովը, պահպանելով օրենսդրական նախաձեռնության իր իրավունքը, դարձավ գլխավոր «գործադիր» իշխանությունը:

1974թ. դեկտեմբերին Փարիզում անդամ-պետությունների ղեկավարներն ընդունեցին ևս երկու կարևորագույն ինստիտուցիոնալ որոշումներ.

1. սկսած 1978թ. պետք է անցկացվեն Եվրոպական խորհրդարանի ուղղակի ընտրություններ²,
2. բարձր մակարդակով չկանոնակարգված հանդիպումների փոխարեն պետք է ձևավորվի անդամ-պետությունների և նրանց կառավարությունների ղեկավարներից կազմված Եվրոպական խորհուրդ, որը պետք է կանոնավոր նիստեր գումարի և՛ համայնքների, և՛ քաղաքական համագործակցության շրջանակներում:

1986թ. ընդունված Միասնական եվրոպական ակտը (ՄԵԱ) ընդլայնեց ինտեգրման գործընթացի շրջանակները, որում շատ այլ խնդիրներից զատ օրենսդրորեն ամրագրվեց անդամ-պետությունների արտաքին քաղաքականության ուղղորդումը Քաղաքական

¹ Առավել մանրամասը տե՛ս Шемятенков В. Г., Европейская интеграция. стр. 35

² Արդեն 1979թ. հունիսին անցկացվեցին Եվրոպական խորհրդարանի առաջին ուղղակի ընտրությունները, ինչով այդ կառույցն ստացավ անմիջական ժողովրդավարական լեգիտիմություն

համագործակցության քարտուղարության միջոցով, որը ոչ պաշտոնապես 1970թ.-ից գործում էր ԵՀ Հանձնաժողովի շրջանակներում: ՄԵԱ-ն էականորեն կատարելագործեց նաև որոշումների ընդունման մեխանիզմը՝ ընդլայնելով որակյալ մեծամասնության սկզբունքի կիրառման ոլորտը¹:

Մինչ ՄԵԱ կնքումը Համայնքի օրենքների մեծամասնությունը մշակվում էր խորհրդակցական ընթացակարգով, որի միջոցով Հանձնաժողովն առաջարկում էր օրինագիծ, Խորհրդարանն իր կարծիքն էր արտահայտում դրա մասին, իսկ Նախարարների խորհուրդն ընդունում էր վերջնական որոշում՝ պարտավորված չլինելով անպայման հետևել այդ կարծիքին: ՄԵԱ ներքին շուկային վերաբերող որոշակի օրենքների ընդունման համար լրացուցիչ ներմուծվեց նաև համագործակցության ընթացակարգը, որը ենթադրում է Խորհրդարանում օրինագծի երկու ընթերցում:

Ըստ այդմ, այն բանից հետո, երբ Խորհրդարանը Հանձնաժողովի առաջարկությամբ եզրակացություն է ընդունում, Խորհուրդը մշակում է ընդհանուր դիրքորոշում, որը Խորհրդարանը կարող է ընդունել կամ մերժել: Վերջին դեպքում Խորհուրդը երկրորդ ընթերցմամբ միաձայն կարող է ընդունել որոշումը:

Այս ընթացակարգով երրորդ հնարավոր եղանակը Խորհրդարանի կողմից Խորհրդի դիրքորոշման մեջ լրացում մտցնելն է: Տվյալ դեպքում ընդհանուր դիրքորոշումը խորհրդարանական լուծումների հետ մեկտեղ կրկին ուսումնասիրվում է Հանձնաժողովում: Վերջնական արդյունքում Խորհուրդը կամ որակյալ մեծամասնությամբ ընդունում է առաջարկը խորհրդարանական լրացումներով այն տեսքով, որով այն հավանության էր արժանացել Հանձնաժողովի կրկնակի քննարկան ընթացքում, կամ իր մտքած փոփոխություններով միաձայն ընդունում է առաջարկը: Հանձնաժողովի կողմից մերժված խորհրդարանական լրացումներին Խորհուրդը կարող է հավանություն տալ իր միաձայն որոշմամբ²:

Եվրոպական ինտեգրման ինստիտուցիոնալ-գործառնության զարգացման մեջ կարևորագույն ձեռքբերում հանդիսացավ Եվրոպական միության (ԵՄ) հիմնադրումը:

1992թ. կնքված Մասատրիխտյան պայմանագիրը (Եվրոպական միության մասին պայմանագիր) շարադրելիս բախվեցին 2 հակադիր սկզբունքներ՝ վերազգային ինտեգրման շինարարության սկզբունքը և ազգային պետությունների միջկառավարական համագործակցության սկզբունքը, որոնք այդպես էլ չհաջողվեց լիարժեք համաձայնեցնել պայմանագրի տեքստում:

Պայմանագրի կենտրոնական նպատակներից էին.

¹ Տե՛ս u Европейский Союз на пороге XXI века, стр. 24-26

² Առավել մանրամասը տե՛ս u http://europa.eu.int/scadplus/treaties/singleact_de.htm - Եվրոպական միասնական սկտի տեքստը Եվրոպական միության համացանցային էջում

- վերածել ԵՏՀ-ն Եվրոպական ընկերության՝ ընդլայնելով նրա իրավասության շրջանակներն ի հաշիվ գործունեության նոր ոլորտների,
- լրացնել վերազգային ինտեգրման շինարարությունը Համայնքի ինստիտուտների շրջանակներում («առաջին հենք») արտաքին քաղաքականության և անվտանգության («երկրորդ հենք»), արդարադատության ու ներքին գործերի («երրորդ հենք») բնագավառներում մշտական համագործակցությամբ,
- միավորել բոլոր 3 հենքերը Եվրոպական միության միասնական համակարգի շրջանակներում:

ԵՄ-ը դաշնություն էր ամեն ինչով, բացի անվանումից: Ի տարբերություն Եվրոպական ընկերության՝ ԵՄ-ը չունեւ միջազգային իրավասութեկտիվություն: ԵԸ-ը կառուցված էր վերազգայինության և Ընկերության ինստիտուտների տնօրինմանն ազգային ինքնիշխանության մասնակի փոխանցման սկզբունքի հիման վրա: «Երկրորդ» և «երրորդ հենքերն» իրենցից ներկայացնում են միջկառավարական համագործակցության ոլորտներ, որտեղ մասնակից-պետությունները լիովին և անբաժան պահպանում են իրենց ինքնիշխան կարգավիճակը: «Վերազգայինի» և «ազգայինի» այդ հակասության լուծումն իրականացվում է «առաջին հենքի» իրավասության ոլորտ լիազորություններ փոխանցելով¹:

Մասատրիխտյան պայմանագրի նորարարություններից էին.

- եվրոպական քաղաքացիության ներմուծումն ի լրում մի քանի անդամների քաղաքացիության;
- 1994թ. սկսած բոլոր քաղաքացիներն իրավունք ստացան քվեարկելու բոլոր այն երկրներում, որտեղ նրանք այդ պահին բնակվում են՝ համապատասխան Նախարարների խորհրդի կողմից միաձայն հաստատման ենթակա կանոնների²;
- ամրագրվեցին սուբսիդիարության, պատվիրակված լիազորությունների և համամասնականության սկզբունքները: Սուբսիդիարության սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ այդուհետ ԵՄ շրջանակներում որոշումները պետք է ընդունվեն հնարավորինս չափ ցածր մակարդակում³: Այդ գաղափարը մոտ է ֆեդերալիզմի ավանդական սկզբունքին, որի իմաստը կայանում է «ԵՄ ինստիտուտներ - ազգային պետություններ - տարածաշրջաններ» համակարգում կառավարման չափազանց կենտրոնացումից և ավելցուկային ապակենտրոնացումից խուսափելու մեջ: Միությունն այսուհետ գործում է Մասատրիխտյան պայմանագրով որոշվող և նրա

¹ Տե՛ս Европейский Союз на пороге XXI века, стр. 34

² Տե՛ս П. Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Часть II, стр. 315

³ Ընկերությունը գործում է, եթե և քանզի ենթադրվող գործողության նպատակները չեն կարող բավարար չափով իրագործվել ազգային պետությունների կողմից և, այդ պատճառով, կախված ենթադրվող գործողության մասշտաբներից և արդյունքներից, կարող են ավելի հաջող իրագործվել Համայնքի կողմից:

առջև դրված նպատակներին հասնելու իրավասությունների շրջանակներում (լիազորությունների պատվիրակման սկզբունք): Համամասնության սկզբունքն իր հերթին ամրագրում է, որ Համայնքի ցանկացած գործողություն չպետք է գնա ավելի հեռու, քան անհրաժեշտ է Մասստրիխտյան պայմանագրի նպատակների իրագործման համար;

- ձևավորվեց նոր ինստիտուցիոնալ կառուցվածք՝ Տարածաշրջանների կոմիտեն, որը թույլ է տալիս եվրոպական առանձին տարածքների ու տարածաշրջանների կառավարությունների ղեկավարներին ներկայացնել համապատասխան անդամ-պետություններին ԵՄ Խորհրդի նիստերում;
- ԵՄ մակարդակ ներդրվեց նաև Օմբուդսմենի ինստիտուտը՝ օժտված Համայնքի ինստիտուցիոնալ կառուցվածքների և մարմինների ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում տուժած քաղաքացիների բողոքներն ընդունելու լիազորություններով;
- հանգուցային ինստիտուցիոնալ նորարարություն հանդիսացավ համատեղ որոշումների ընդունման ընթացակարգը, երբ Խորհրդարանը կարող է իրավահավասար պայմաններում բանակցել Խորհրդի հետ և անգամ օգտվել վետոյի իրավունքից մի շարք որոշումներ ընդունելու դեպքում: Եթե Եվրոպական խորհրդարանն իր անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ մերժում է համաձայնեցված որոշումը, ապա Խորհուրդը կարող է հրավիրել իր և Խորհրդարանի անդամներից կազմված Հաշտարար կոմիտեի նիստ: Դրանից հետո Խորհրդարանը կամ ձայների բացարձակ մեծամասնությամբ վերահաստատում է իր մերժումը (այս դեպքում փաստաթուղթը համարվում է չընդունված), կամ առաջարկում է լրացումներ¹: Այս դեպքում Հաշտարար կոմիտեն աշխատում է համատեղ որոշման տեքստի վրա, որի վերջնական ընդունման համար պահանջվում են Խորհրդարանի ձայների բացարձակ մեծամասնությունը և Խորհրդի ձայների որակյալ մեծամասնությունը: Իսկ եթե Հաշտարար կոմիտեն հավանության չի արժանացնում համատեղ որոշման տեքստը, ապա այդ փաստաթղթի ընդունման համար անհրաժեշտ է, որպեսզի Խորհուրդը կոնկրետ ժամանակահատվածում ձայների որակյալ մեծամասնությամբ հաստատի համաձայնեցված դիրքորոշումը, որին նա հանգել էր մինչև հաշտարար ընթացակարգի սկիզբը՝ հնարավոր է՝ Խորհրդարանի առաջարկած լրացումներով: Այս դեպքում փաստաթուղթն ընդունվում է վերջնականապես, եթե Եվրոպական խորհրդարանը ձայների բացարձակ մեծամասնությամբ չի մերժում այն;
- Խորհրդարանը հնարավորություն ստացավ ձայների 2/3-ի մեծամասնությամբ անվստահություն հայտնել Հանձնաժողովին ու այդկերպ ողջ կազմով ցրել այն;

¹ Տե՛ս Եвропейский Союз на пороге XXI века, стр. 253

- Խորհրդարանը կարող է նշանակալի բարոյական և քաղաքական ազդեցություն ունենալ «երկրորդ» և «երրորդ» հենքերի վրա, ինչը դրանք դարձնում է ավելին, քան պարզ միջկառավարական համագործակցությունը;
- Նախարարների խորհրդում յուրաքանչյուր անդամի վետոյի իրավունքը որոշակիորեն թուլացվեց՝ ավելացնելով այն հարցերի թիվը, որոնք որոշվում էին ոչ թե միաձայնության, այլ մեծամասնության սկզբունքով;
- Հանձնաժողովի նախագահին արդեն պետք է նշանակելին անդամ-պետությունների կառավարությունները Խորհրդարանի հետ խորհրդակցելուց հետո, իսկ Հանձնաժողովի մյուս անդամներին կառավարությունները նշանակում էին առանձին-առանձին՝ Նախագահի հետ խորհրդակցելուց հետո;
- Պայմանագրի համաձայն ստեղծվեց Եվրոպական խորհուրդ, որի կազմի մեջ են մտնում կառավարությունների ու պետությունների ղեկավարներն ու Հանձնաժողովի նախագահը: Խորհուրդը պետք է հավաքվի տարին մեկ անգամ և պետք է Խորհրդարանին ներկայացնի տարեկան զեկույց ԵՄ վիճակի մասին¹:

ԵՄ հետագա ընդլայնումից հետո Հանձնաժողովի ձևավորման նախկին բանաձևն² սպառնում էր վերածել Հանձնաժողովը չափազանց մեծ կազմով ատյանի: Բացի դրանից, խոշոր պետությունները մտավախություն ունեին, որ ԵՄ անդամների թվի ավելացման դեպքում իրենք կհայտնվեն փոքրամասնության մեջ և ստիպված կլինեն իրականացնել փոքր պետությունների կողմից իրենց պարտադրված որոշումները:

Այս և մի շարք այլ խնդիրների կարգավորմանն էր կոչված 1997թ. կնքված Ամստերդամյան պայմանագիրը:

Պայմանագրի հիմնական դրույթներից էին.

- ամրագրվում էր անդամ-պետությունների անվիճելի պարտավորությունը խստորեն պահպանել մարդու հիմնարար իրավունքները, կանխել ցանկացած խտրականություն և ապահովել իրավակարգի համարժեք որակ: Դրանց իմաստը նրանում է, որ ԵՄ-ն ոչ մի իրավիճակում չի հանդուրժի ոչ մի անդամ-պետության կողմից մարդու հիմնական իրավունքների ոտնահարումը: ԵՄ ինստիտուտները պայքար կմղեն նման խախտումների դեմ, իսկ դրանցից տուժած քաղաքացիներն իրավունք ստացան դիմելու ԵՄ Դատարանի իրավական պաշտպանությանը³

¹ Առավել մանրամասը տե՛ս http://europa.eu.int/scadplus/treaties/maastricht_de.htm - Եվրոպական միության մասին պայմանագիրը Եվրոպական միության համացանցային էջում

² Հանձնաժողովում տեղերը բաշխվում էին ըստ տվյալ պետության բնակչության թվի՝ երկուական՝ խոշոր պետություններից և մեկական՝ փոքր պետություններից:

³ Այդ դրույթներն իրականում քիչ քան էին փոխում «15-ի» պրակտիկայում, որտեղ մարդու իրավունքների պաշտպանության վիճակն անհանգստություն չի առաջացնում: Հետևաբար այդ դրույթների գլխավոր «հասցեատերը» հանդիսանում են ԵՄ անդամության թեկնածուները:

- իրական քայլ էր արվում ԵՄ ներսում «ժողովրդավարական դեֆիցիտի» հաղթահարման ուղղությամբ՝ ամրապնդելով Եվրոպական խորհրդարանի դերը որպես օրենսդիր գործընթացի՝ «առաջին հենքի» և «Երկրորդ» ու «Երրորդ հենքերի» շրջանակներում խորհրդակցությունների մասնակցի կարգավիճակներում;
- ամրագրվեց, որ Հանձնաժողովը հետագայում ձևավորվելու է անդամ-պետություններից յուրաքանչյուրի կողմից ներկայացված մեկական անդամից;
- ճշգրտվեցին համամասնության և տրանսպարենտության սկզբունքները: ԵՄ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ձեռք բերեց ստանալու ցանկացած տեղեկություն ինստիտուտների վերաբերյալ;
- «Երկրորդ հենքի» ոլորտում ամենախոշոր նորարարությունը հանդիսացավ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձրագույն ներկայացուցչի պաշտոնի ներդրումը;
- ԵՄ այն անդամները, որոնք ցանկանում են ավելի հեռու գնալ ինտեգրման ուղղով, քան իրենց գործընկերները, կարող են կիրառել «առաջադիմական համագործակցության» սկզբունքը, պայմանով, որ այդ դեպքում կպաշտպանվեն ԵՄ և չմասնակցող անդամների շահերը¹:

2000թ. մարտին Նիցայում կնքված պայմանագրով, որն ուժի մեջ է մտել 2003թ., վերացվում է առանձին անդամ-պետությունների վետոյի իրավունքը մի շարք կարևորագույն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ: Գրան զուգահեռ ընդլայնվեց ձայների մեծամասնությամբ որոշվող հարցերի ոլորտը: Ընդլայնվեցին նաև Եվրոպական հանձնաժողովի նախագահի և Եվրոպական խորհրդարանի իրավասությունները²:

Արդեն 2005թ. հունվարից ուժի մեջ է մտել Եվրոպական խորհրդում ձայների քաշխման նոր համակարգը, որն ամրապնդում է խոշոր պետությունների դիրքերը: Բացի այդ, այդուհետ ԵՄ յուրաքանչյուր անդամ կարող է Հանձնաժողով պատվիրակել միայն մեկ ներկայացուցչի:

2001թ. դեկտեմբերին Լակենում կայացած Եվրոպական խորհրդում ընդունվեց որոշում ԵՄ սահմանադրության մշակման նպատակով Եվրոպական կոնվենտ հրավիրելու վերաբերյալ: Կոնվենտի առջև խնդիր դրվեց ներկայացնել առաջարկություններ երեք հիմնական թեմաների վերաբերյալ, այն է՝ ինչպես մոտեցնել Եվրոպական նախագիծն ու Եվրոպական մարմինները քաղաքացիներին, ինչպես կառուցել քաղաքական կյանքն ու

¹ Առավել մանրամասը տե՛ս <http://europa.eu.int/scadplus/leg/de/s50000.htm> - Ամստերդամյան պայմանագրի տեքստը Եվրոպական միության համացանցային էջում

² Առավել մանրամասը տե՛ս http://europa.eu.int/scadplus/nice_treaty/index_de.htm - Նիցայի պայմանագրի տեքստը Եվրոպական միության համացանցային էջում

Եվրոպական Միության ինստիտուցիոնալ-գործառնության զարգացումը // «Օրենք և իրականություն»
միջազգային իրավաբանական գիտական հանդես, 11 (121), Նոյեմբեր, 2005, էջ 12-15

Եվրոպական քաղաքական տարածքն ընդլայնված միության շրջանակներում և ինչպես
վերածել ԵՄ-ն կայունության գործոնի և նոր աշխարհակարգի մոդելի: